



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԹԻԻ 10

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Յ ՆՈՅՆԱՐԵՐ 1870



Ի ԳՈՐԾԱՐԱՆԻ ԶԱՐԴԱՐԵԱՆ

Կ՝ ՊՕԼԻՍ ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԱՄ ԹԻԻ 12-14

— 1870 —

մակ մ' ընդունած չէ, որ կարող ըլլայ ընտրահան գործողութեանց ձեռնարկել:

ԱՏԵՆԱԴՊԻՐ ԷՖ. — Քաջ գիտեմ որ Դիւանը նամակը դրկած է, թո՛ղ վարչութիւնը եթէ ցարդ զայն չէ առած, իր շուրջը բնտուէ, և գործադրէ:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Դիւանին այդ նամակը հիւանդութեանս միջոցին ինձի հասաւ, և այս պատճառաւ ցարդ անգործադրելի մնաց:

Այս միջոցիս Ատենապետ էֆէնտին ժողովին ներկայացուց Օտեան էֆէնտի մէկ նամակը, որով երկրորդ անգամ ատենապետի պաշտօնէն կը հրաժարէր իւր մէջ բերած նախորդ պատճառը կրկնելով, և հետեւապէս ժողովը հրաւիրեց անոր վրայ իր կամքը յայտնելու:

ԵՈՒՍՈՒՖԵԱՆ ԷՖ. — Կ'աղաչեմ որ այդ հրաժարականը չընդունուի:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. Ընդհ. ժողովոյ համար բարեբաղդութիւն մըն է Օտեան էֆէնտի պէս Ատենապետ մ' ունենալը, և ո՛չ որ անոր հրաժարէր կ'ուզէ, բայց եթէ կրկնէ վերստին, ժողովը ի՛նչ ընթացք բռնելու է:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ինչպէս նախորդ անգամուն ալ ըսի, կը կրկնեմ, որ այդ խնդրոյն լուծումը իր ներկայութեան թաղուի:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ի մօտոյ լսած եմ որ Ռուսիան էֆէնտին անոր հետ բանակցեր է այս խնդրոյն վրայ, ուստի կ'առաջարկեմ որ բանակցութեան արդիւնքը ժողովին խնայնէ:

ԱՏԵՆԱԴՊԻՐ ԷՖ. — Ինչ որ գիտեմ նամակին պարունակութենէն տարբեր բան մը չէ. ժողովոյ ատենապետութիւնը իրեն գործունէաց պաշտօնէութիւն չեմ կրնար ընդունիլ կ'ըսէ Օտեան էֆէնտին:

ԵՈՒՍՈՒՖԵԱՆ ԷՖ. — Եթէ այս տեսակ պատճառ մը ժողովոյ կողմէ ընդունելի դատուի, այնուհետեւ Երեսփոխաններէն ոչ որ պաշտօն կ'ընդունի, ամենքն ալ զիստա մը պիտի ունենան նմանօրինակ պատճառներ մէջ բերելու, վասն զի ամենուն ալ գործը ծանր է իր մասնաւոր շրջանին մէջ:

Թերեւս Օտեան էֆէնտին Ընդհ. ժողովոյ նախորդ որոշումը իւր հրաժարականի մասին միայն լրացրաց մէջ կարդացած է առանց պաշտօնական գիր ընդունելու, ուստի պէտք է որ իրեն նամակաւ ծանուցուի, և եթէ դարձեալ սկսէ ժողովը այն ատեն սարսու պատշաճը կը տնօրինէ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ինչո՞ւ նամակ չէ գրուեր, քանի որ արդէն ժողովն որոշած էր: **ԱՏԵՆԱԴՊԻՐ ԷՖ.** — Ուսկէ՞ կը ծագին այս նեխագրութիւնները չդիտեմ: Ոչ միայն Դիւանը նամակ գրած և բերանացի ալ բանակցութեան մտած է անոր հետ, այլ Արքազան Նախագահն իսկ անձամբ գնացած է միջնորդելու, հրաժարականը ետ առնել տալու համար:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ժողովը ասկէ առաջ Օտեան էֆէնտի հրաժարականը անընդունելի դատեց, և դարձեալ ո՛չ որ զայն ընդունելու տրամադրութիւն ունի: Եթէ իւր ներկայութեան յուզուի այս խնդիրը, թերեւս յօժարի կրկին պաշտօնը շարունակելու:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ժողովը մինչեւ որ անոր հրաժարականը չընդունի, զանի երբեք հոս չպիտի տեսնէ: Մենք մեր քաղաքավարական սարսուտութիւնը կատարեցինք, ի՛նչ հարկ կայ նորէն այս խնդրոյն համար թղթակցելու: Թո՛ղ ժողովը իր կողմէն մարմին մ'որոշէ, որ երթայ Օտեան էֆէնտի հետ բանակցի, և անոր վերջնական պատասխանը բերէ ժողովին:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Չէ թէ քաղաքավարական սարսուտութիւն մը կատարած ըլլալու համար կ'ուզեմ որ ժողովը Օտեան էֆէնտի հրաժարականը ետ առնելու միջոց մը գտնէ, այլ վասն զի ժողովը պէտք ունի զանի ատենապետի պաշտօնի մէջ տեսնելու: Ուստի կ'առաջարկեմ որ պաշտօնապէս մէկը երթայ, և անկէ խօսք մը բերէ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Օտեան էֆէնտիին քուէրց բացարձակ առաւելութեամբ ատենապետ ընտրուիլը, և առաջին անգամ իր տուած հրաժարականին ժողովոյ կողմէ մերժուիլը, քաղաքավարական ձեւեր չլին, այլ հարկի արդիւնք էր, զոր ունէր Օտեան էֆէնտի ներկայութիւնը ժողովոյ դիւանին մէջ. ուստի կ'առաջարկեմ որ այս հրաժարականի խնդիրը իւր ներկայութեանը լուծուի, ըստ այսմ ծանուցանելով իրեն:

Այս առաջարկութիւնը կ'ընդունուի: — Ատենապետ էֆէնտին այսօրեայ նիստին ներկայ գտնուող նորընտիր Երեսփոխանները ժողովոյ կողմէ կը շնորհաւորէ, որոնց Տէրոյնց Յովհաննէս էֆէնտին խօսք կ'առնու պատասխանելու համար:

ՏԷՐՈՅԵՆՑ Յ. ԷՖ. — Նախ և առաջ որ Զեր

բարեջան ժողովոյն ընկերութեան ընդունուեցայ, նուաստ ընտրող մեր ազգակցաց կողմէն շնորհակալութիւններ կը յայտնեմ որ անոնց ընտրութիւնը յարգեցիք, ստով Զեղի մէկ ընկեր մը ունեցաք: Ազգին օգտին և բարեոյն համար ալ ձեռքէն եկածին չափ աշխատող ընկեր մը, իմ նուաստութիւնս, որ Զեր Արքազանութեանը և Զիր Մեծապատուութեանցը հետ մեկտեղ՝ անձա ազգին կը նուիրեմ:

Բայց անպատեհ բան մ' ալ չէ խնդրելը՝ որ այս նուէրս օգտակար ըլլայ, և այս նպատակիս հասնելու համար մէկ երկու բան ունիմ առաջարկելիք, որով Ազգ. Սահմանադրութիւնը անսայթաք առաջ կը քալէ, որուն վրայ է այս օրուան օրս՝ Ազգին բարեօրոմանը և յառաջագիտութեան յոյսը:

Ա. Ամենայն զուշուրութեամբ նայիլ՝ որ Սահմանադրութեան հիմնական սկզբունքը անխախտ մնան և միշտ յարդուին, վասն զի ասոնց մէկը աւերելու միտումը՝ բոլոր Սահմանադրութիւնը աւերելու կամք կը ցուցնէ, և ասոր հետեւանքը՝ Ազգիս հիմնական վիճակին նայելով ո՛րքան քէշ ըլլալը հասկցնելու կարօտութիւն չկայ:

Բ. Ամենայն Երեսփոխանական ազգային Ընդհ. ժողովս, այլ և ամէն ազգային ժողով և խորհուրդ և հոգաբարձութիւն և մասնաժողով, թէ՛ կրօնական և թէ՛ աշխարհական, իրենց ներքին բարեկարգութեանը համար հաստատուած կանոններ ունենան. որպէս զի ամէն մէկը իրեն ընկած գործը և անոր մինչեւ ո՛ր աստիճան հասնելու սահմանը գիտնայ: Այս որ չըլլայ նէ, ժողովները և խորհուրդները և՛ որոշակի չը գիտնալով թէ՛ ո՛ր բանը իրեն կ'իջնայ, կամ իրեն չընկած բանին ձեռք պիտի դարնէ, կամ իրեն ընկածին պիտի անհոգանայ, որ մեծ շիտթութիւններու պատճառ կ'ըլլայ, և բան մը առաջ չ'երթար:

Գ. Ամէն դուստրիանց մէջ՝ թէ՛ ժողով ըլլայ թէ՛ խորհուրդ և՛ խօսելու և կարծիք բացատրելու կատարեալ ազատութիւն ըլլայ: Ասանկ ըսելովս այն ըսել չեմ ուզեր թէ՛ ասոնք չկան, ամենուն ալ կենալը ես ինքս կը վկայեմ, բայց գործադրութեան մասին՝ այո՛ կամ ո՛չ բան մը չեմ կրնար ըսել որովհետեւ մինչեւ այս օրս՝ ժողովոյս մէջ ներկայ գտնուած չեմ ի՛նչ որ է նէ՛ ասոնք հոս համառօտ մը յիշելու իմ մտացս մէկ խորհուրդը յայտնել մին է բարեջան ժողովոյդ, որ Սահմանադրութեան հիմունք վրայ հաստատուած ըլլալով՝ չ'ընդունուե-

լու բան մը չկայ: Այս առաջին անգամ այսքան էր խօսելիքս, և միշտ այս է իմ բռնելու և ձեռքէս եկածին չափ պաշտպանելու սկզբունքս:

Ա. ԱՏԵԱՆ ԲԱՆՍԱՆՈՒ ՊԱՅՄԱՆ.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Անցեալ շաբթու մեծագոյն մաս չդոյանալուն պատճառաւ, ատենան չկրցաւ բացուիլ, և ներկայ գտնուող երեսփոխանը Շ ժամ սպասելէ ետքը ձեռնունայն ետ դարձան, երբ անդին խել մը կարեւոր խնդիրներ՝ ստիպող հարկաւ անմիջական տնօրինութեան կը կարօտէին: Իրաց այս վիճակէն ծնաւ ատենան բանալու պայմանի խնդիրը, և նոյն օրը ներկայ գտնուող երեսփոխանաց առաջարկութեան վրայ, Դիւանը հարկադրեալ դրտաւ զինքը խնդրոց կարգն անցնել զայն, իբր առաջին անխօստիւնի և ամենէն աւելի լուծման կարօտ խնդիր մը. որ ժողովոյ նիստերուն կանոնաւոր շարունակութեանը պիտի ծառայէ:

Այսքան միայն բացատրութիւն տալով սոյն կէտին վրայ, խնդիրը ժողովոյ ուշադրութեանը կը ներկայացնեմ, և կը հրաւիրեմ Երեսփոխանները իրենց գիտողութիւնը յառաջ բերելու:

ԱՏԵՆԱԴՊԻՐ ԷՖ. — Անցեալ ուրբաթ օր ներկայ գտնուող Երեսփոխանը կը յիշեն որ մինչդեռ մեծագոյն մաս չդոյանալուն համար, ի զուր ժամերով սպասելէ ետքը, յուսարեկ ցրուելու վրայ էինք, չուզեցինք բոլորովին մեր ժամանակը յուժապէտս ծախել, և փոխանակ ժողովի՛ ժողովակ մը կազմելով, ներկայ Երեսփոխաններով սակաւ ինչ այս վիճակին վրայ խօսեցանք, զաղախարաց հազորդակցութեամբ իրաց ելք մը գտնելու համար: Դեռ բուն խնդրոյն վրայ չանցած, նախ Դիւանին կողմէն շնորհակալութիւն կը մատուցանեմ առ Բարձրաշնորհ Արքազան Նախագահն, որ իր ազգու հրաւիրովը մեծագոյն մաս կրցաւ գումարել այսօր հոս, երկրորդ՝ պիտի խնդրեմ ժողովէն որ այս պատեհէն օգուտ քաղէ խնաստուն վճով մը լուծելով այսօր այն կրճիմ դժուարութիւնը՝ որ ժողովոյ ձեռքերը կ'անդամալուծէ: Սահմանադրութեան տարանակայ հաստատութենէն ի վեր, քանի քանի վիճարանութեանց նիւթ եղած է այս խնդիրը, և դեռ գործնական լուծում մը չէ գտած, այս առաջին անգամը չէ, որ ժողովը յետագարձ քայլ մը կ'առնու, և այս լուծեալ կարծուած խնդիրը կը ձեռնէ. քանի քանի

մործեր եղան : կանոններ սահմանուեցան , բայց իրողութիւնն եցոյց , որ եղածները բաւական չէին , և անհնար է դարձեալ այսօր ատեանը բանալ և ժողովը այսքան ճիգերէ ետքը գեւ հոն է , ուր որ էր 10 տարի առաջ :

Այս խնդիրը կրնանք ըսել ժողովին դուռը կամ բանալին է : զոր չգտինք , և չունինք այս օր ձեռուրնիս , և երբ հոս կը մերձենանք , շուարեալ կը մնանք . ոմանք պատուհանէն ենքս կուզեն մտնել , ոմանք դուռը քակել , և վերջապէս կը ձգենք ետ կը դառնանք կ'երթանք : Արդ՝ արժան է հոս քննել թէ ի՞նչ կերպով կրնայ օրինաւորապէս լուծուիլ այս խնդիրը : Հին Սահմանադրութիւնը կ'ըսէ , որ մինչեւ մեծագոյն մաս չգոյանայ , ատեան չբացուի . ըսել է՝ հարկ կայ մեծագոյն մասի և օրինաւորութեան սկզբունքի հետեւանքն է : Այս , այս հետեւանքը իրաւունք մին է . բայց քանի որ այս իրաւունքը չենք վիրաւորած , օրինաւորութենէ դուրս չենք : Երբ վիրաւորեալ է . երբ որ իրաւանց տէրը բողոքէ : Հիմա բնութենէ թէ ո՞ր պարագաներու մէջ և որո՞ւ իրաւունքը կրնանք վիրաւորած ըլլալ : Պարտ մ'ունինք , չէ թէ այս ժողովին առջին , այլ Ազգին առջին , որ զիս այս պաշտօնին կուած է , այն է՝ ներկայ գտնուիլ , և իմ էրեսփոխանական իրաւունքս ի դործ դնել . իրաւունքը ազատ պահելու համար անոր տիրոջը ամէն պարագայի մէջ իմաց կը տրուի թէ՛ զայն դործագրելու օրը հասած է , ժամը որոշուած է . ինչպէս որ ժողովը նախագահը հրաւէր կը կարդայ ներկայանալու , վիճելի խնդիրները կը ցուցնէ և կ'ըսէ թէ՛ այս ինչ օր , այս ինչ ժամուն ատեանը պիտի բացուի , ե՛կ իրաւունքը գործողքէ : Եկողները իրենց պարտքը կը կատարեն , ըսելիք չկայ . բայց չեկողները պահասութեան մէջ կը գտնուին , ուստի՝ երբ այդ հրաւէրի նամակը կ'առանան և կը դանդաղին գալու , ա՛լ այնուհետեւ բողոքելու իրաւունք չունին , թէ ի՞նչու ատեան բացուած է և ժողովը որոշումներ ըրած է . ով որ բողոքէ՝ ինքզինքը պիտի տնտեսանէ , իր պարտազանցութիւնը պիտի կշտամբէ ինքնիրեն : Բայց միւս կողմէն ներքին ալ չէ ըսել , թէ ո՞վ պիտի համար հարցունէ , ո՞վ պիտի բողոքէ , որովհետեւ գործը Ազգինն է , և պաշտօնեացն Ազգին : ուստի Ազգը իրաւունք ունի բողոքելու իր պարտազանց պաշտօնեային դէմ : Ազգին այն մասը , այն ժողովը որ զայն պաշտօնեայն ընտրած է , ըսել է բարոյական գաւտ մը կայ բա-

ցուած ընտրողին ու ընտրեալին մէջ . ո՞վ պիտի տեսնէ այս գաւտը , ո՞վ պիտի ուզի : Հոս իրաւունքը : Արդ՝ զայս դասը կրեսփոխանական ժողովը պիտի տեսնէ դարձեալ , և յանուն Ազգին անի պիտի վճռէ օրինադրապէս . ըսել է որ օրէնք պիտի հաստատէ պարտազանցութեան դէմ , և այն օրէնքին առջին պահասաւոր դուռնուող էրեսփոխանը անկեպ պիտի համարի իր պաշտօնէն , և զայս օրինաւոր անժողովը ընտրող ժողովին իմացնելով՝ անկեպ պիտի տեղ ուրիշ մը ընտրել պիտի հրաւիրէ : Այժմ ընտրողը նորէն ընտրեն ու դրկեն այն պարտազանց էրեսփոխանը , կամ անոր նման ուրիշ մը , մի և նոյն բանը կը պատահի դարձեալ , երբ որ և քանի անգամ որ ըստ օրինի հաստատուի պարտազանցութիւնը :

Այս օրէնքը ճշտիւ հաստատուելէն ետքը , և ամէն տեսակ անտեղութեանց առջեւն առուած ըլլալու համար , ժողով թէ՛ խորհուրդ , չափտի կարենայ ատեան բանալ , մինչեւ որ առաջուց իւր անդամոց չիմացնէ գումարման օրը և պատճառը : Կարելի է մտածել թէ կըրնայ խարդախութիւն սպողիլ հրաւիրադրաց առաքման մէջ , և ուշ հասցնել ատեն էրեսփոխանաց ոմանց ձեռքը , որպէս զի չկարենան ներկայանալ այս կամ այն նիստին : Այս անտեղութեան առաջին անելու համար՝ պէտք է որ 2 կամ 3 օր յառաջ դիրք իր տեղը հասնի , և ինչպէս հեռագիր աւանդը ընդունելութեան ստորագրութիւն կուտայ , նոյնպէս զիրը տանողը տեսարի մը մէջ զայն ընդունողին ստորագրութիւնը դնել տայ :

Երկրորդ՝ ժողովը չափտի կարենայ նաեւ խնդրոց կարգէն դուրս նիւթի մը վրայ որոշում ընել , վասն զի անոնք որ եկած չեն այն օրուան նիստին , ըսել է՝ նշանակուած խնդիրներուն մասին անտարբեր են , ըսելիք չունին :

Բայց երբ ժողովը նոր խնդրի մը զբաղի , գրկանք մ'ըրած կը համարուի բացակայ էրեսփոխանին , որ թերեւս նոյն խնդրին վրայ խօսելու գրամագիր կարծիք ունէր յայտնելու . ուրիշ բանէ՛ երբ ժողովը առկաղ հարկ մը տեսնէ նոր խնդիր մը յուզելու , այն ատեն անոր վրայ կը վիճարանի կը խորհրդակցի , բայց որոշում դարձեալ չի կրնար ընել , զի էրեսփոխանաց չժանուցուած խնդիր մը որոշելը խարդախութիւն կրնայ նշանակել . ըստ իս՝ օրինաւորութեան երկու պայման կայ ատեան բանալու համար , առաջին՝ ստուգել թէ բո-

լոր ժողովականներն օր յառաջ առարձ են հաւէրի նամակը , երկրորդ՝ ժողովը որոշեալ ժամուն ատեանը բանալով ներկայ էրեսփոխաններով գործել , ո՞ր և ըլլայ անոնց թիւը , նոյն օրուան խնդրոց վրայ միայն որոշում տալով ներկայից մեծագոյն մասամբ : Ժողովը այս կրկու օրինաւորութեան պայմաններն ընդունելէ ետքը՝ ոչ ոք կրնայ իրաւամբ բողոք բառնալ անոր դէմ ահա ըստ իս այս է գործնական միջոց ատեան բանալու :

Իսկ հիմա՝ մեր արդի վիճակին մէջ , ուր այս օրէնքը չունինք , ես պիտի արդարացնեմ չեկողներուն մէկ մասը , և իրաւունք տամ անոնց , հրաւիրեալ էրեսփոխանը՝ իրաւունք ունի մտածել ու ըսել ինքնիրեն , թերեւս մեծագոյն մաս չգոյանալով ատեան չափտի բացուի , ինչո՞ւ ուրեմն գործս ձգեմ երթամ , և սուանց ազգային գործ տեսնելու՝ ընդունայն ատեն անցընեմ ու ետ դառնամ գամ : Ես ըլլամ չեկողը , միայն չեմ մտածեր , այլ առած հրաւիրադրիս պատասխան կը գրեմ այս իմաստ , ի՞նչ ապահովութիւն ունիք ատեան բանալու՝ որ զիս կը հրաւիրէք . միթէ կրնաք պահանջել ու ըսել՝ եկէք դուք բախտովի , գուցէ պատահի մեծագոյն մաս և ատեան բացուի , և եթէ չբացուի ի՞նչ հոգ , կրնաք ետ դառնալ :

Արդ՝ մինչեւ հիմա ձեր հրաւիրադիրներուն իմաստը սա էր , և զարմանալի չէ որ շատերը ասոր իրենց բացակայութեամբը պատասխանեցին , իրաւունք ունէին : Ռուստի ես վերոյիշեալ երկու պայմանները իրրեւ օրինաւոր պայման ատեան բանալու՝ առաջարկութեան ձեռով կը ներկայացնեմ ժողովին , և խօսքս կնքելով կ'ըսեմ իրեն՝ Ընդհ. ժողովը տասը տարիէ՛ ի վեր զինքը յոգնեցնող այս խնդիրը օրինաւորութեան ճամբով և գործնապէս չէ կրցած լուծել մինչեւ այսօր , եթէ այսօր զանի լուծէ , ժողովին դուռները բացած պիտի ըլլայ , ժողովականաց կաշկանդեալ ձեռքերը արձակած պիտի ըլլայ . վերջապէս ժողովային մեծ խընդիր մը լուծած պիտի ըլլայ , և այսօրուան էրեսփոխանութեան հերիք է այս փառքը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Իբր էրեսփոխան Ռուսինեան էֆէնտիի առաջարկութիւնը կրկնելով՝ աւելուգ չեմ համարեր նաեւ իբր գիւտնի անդամ ինչ ինչ կէտերու վրայ բացատրութիւն տալ , որ թերեւս խնդիրը լուսաւորէ և անոր լուծմանը նպաստէ :

Գիտէ՞ք արդեօք թէ մինչեւ ցարդ ի՞նչ ե-

ղած է մեր բնտուած պայմանը ատեան բանալու համար : Ժողովը գումարուած ատեն զիւանը ներկայութեան գիրը ձեռք կ'առնու և երբ կը տեսնէ որ հոն 30 կամ 60 այսինքն մեծագոյն մասի ստորագրութիւն կայ , ատեանը բացուած կը հրատարակէ , թէ և անձամբ հոգիւ 30 կամ 35 հոգի ներկայ են , վասն զի ժողովականներէն ոմանք կու գան և ներկայութեան գիրը ստորագրելով կը մեկնին կ'երթան իրենց գործին պարսպելու , որու մարդ գերի եղած է այս քաղաքին մէջ : Արդ՝ էրեսփոխան մը երբ հրաւէրի նամակը առած ատեն խնդրոց կարգին կը տեղեկանայ , և ինչպէս ըսաւ Ռուսինեան էֆէնտին , տեսարի մը մէջ կ'ստորագրէ : Բայց ժողովի ներկայ չի գտնուիր , կը նմանի այն էրեսփոխանին որ ժողովին ներկայութեան գիրը ստորագրելով մեկնած է . մանաւանդ որ սա օրինաւորութեան պայմանն ալ կայ , որ ժողովը չափտի կրնայ օրուան կարգէն դուրս գտնուող խնդրոց վրայ որոշում ընել , որով բացակայ էրեսփոխանաց իրաւունքը պիտի ապահովի :

Ձեւ երկրայիթ թէ ժողովը այս որոշումն ընելով թէ՛ օրինաւորութիւնը պահպանած և թէ՛ գործելու հեշտին եղանակ մը գտած պիտի ըլլայ , որու դէմ բացակայ էրեսփոխանները բողոք բառնալու իրաւունք չունին : Անցեալ շաբթու ժողովին անգործութեան պատասխարտուելը տեսնելով պարտաւորեցանք մտածել այս ցաւալի վիճակին վրայ , և այս եղանակը գտնել իբր գործնական և օրինաւոր միջոց՝ զոր Օգոսէն էֆէնտին առաջարկեց , Ռուսինեան էֆէնտին բացատրեց , և ես կրկնեցի :

ԵՄՍՄՍՄՍՄՍՄՍ ԷՖ. — Աւելորդ կը համարիմ Ռուսինեան էֆէնտիի լուսաւոր տեղեկութեանց վրայ ուրիշ խորհրդածութիւններ ալ յաւելուլ , ստուգիւ մեծ փառք է այս խնդիրը կարգի դնելը : Անցեալ շաբթու 40 էն աւելի էրեսփոխանք եկած էին իրենց պարտաւորութիւնը կատարելու : Բայց մէկ պահասութիւն մը զանոնք շղթայեց անգործութեան մէջ . կ'առաջարկեմ որ Ռուսինեան էֆէնտիի առաջարկութիւնը՝ որ նոր օրէնք մըն է , յօդուած առ յօդուած ի գիր առնուի , և այնպէս ներկայանայ ժողովին , որպէս զի լաւ ըմբռնէ անոր ոգին :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Այս առաջարկութիւնը անընդունելի է ինձի , առաջին նիստէն ի վեր չեկող էրեսփոխաններ կան , ինչո՞ւ անոնց տեղ ուրիշները չընտրուին և Սահմանադրութեան տրամադրութեան մէկ որոշ կա-

նոնր փոխենք : զանի փոխանգի տակ զնեւով : Փոխանակ օրէնք փոփոխելու նայինք որ գործուած պակասութիւնները չտկենք :

ՀՈՎՈՒՅԱՆ Ղ. ԷՖ. — Քրիստոստուր էֆէնտիի դիտողութեանց համամիտ եմ :

ԱՏԵՆԱԳՊԻՐ ԷՖ. — Դիւրին է ըսել թէ այս կամ այն առաջարկութիւնը չեմ ընդունիր, բայց անոր տեղ ուրիշ միջոց մը գտնելու է, որ մի եւ նոյն արդիւնքը յառաջ բերէ : այս աստիճան օրինաւորութեան հետ լծորդուած : Ինչ օգուտ կարելի է քաղել բացակայ Երեսփոխանները հրաժարեցնելէ, երբ ապահովութիւն չունիս որ անոնց յաջորդները մի եւ նոյն պակասութիւնը չգործեն :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Զարմանալի չէ որ Քրիստոստուր էֆէնտին այս առաջարկութեան զէմ խօսի և չընդունի զայն. եթէ խրնդիրն անոր ընդունածին պէս ըլլար, մի եւ նոյն բանն էր և իմ ընելիքս :

Ռուսինեան էֆէնտին մեծ գործ մը պիտի տեսնենք ըսաւ : իսկ Երեսփոխան էֆէնտին կարծիք թէ օրէնք մը պիտի սահմանեմք : միջդեռ խնդիրը ոչ այնքան բարձր է և ոչ օրէնքի խնդիր մը : այլ պարզ կարգադրութիւն մըն է, որով հնարին պիտի ըլլար դարմանել մեր մինչիւ ցարդ ըրած զեղծումը : Սահմանադրութիւնը կը հրամայէ որ մինչեւ 71 հոգի այսինքն մեծագոյն մաս ներկայ չըլլայ, ատեան չբացուի, բայց այս թիւը միշտ փոփոխութիւն կրնայ և օրէնքի տրամադրութիւնն ի գործ չգրուեցաւ անվրէպ : Ահա մեր առաջարկութիւնը այս խախտեալ օրինաւորութիւնը պիտի հաստատէ : Ժողովը ինչ հիմ դրած է արդեօք մեծագոյն մասի ներկայութիւնը ճշտելու համար, եթէ ոչ ներկայութեան տեսրին մէջ ստորագրութիւնները քննել և օրինական թիւը զըտնուած ատեն ատեանը բանալ առանց անձերը համբերու. մի և նոյն բանն է հիմա ընելիքնիս : հրաւիրագրերուն հետ տեսրակը պիտի զրկենք Երեսփոխանաց ստորագրութիւններն առնելու համար, երբ մեծագոյն թիւ գոյանայ, ատեանը պիտի բացուի, որով օրինաց պահանջման համեմատ 71 թիւը պիտի գտնուի միշտ, և միւս եւս անոր զէմ մեղանջելու հարկ չպիտի մնայ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. Ռուսինեան էֆէնտիի առաջարկութիւնը ժողովը մէկ երկու շաբաթ առաջ որոշումը եղծելու վրայ է, որովհետեւ Սահմանադրութեան ոգին ձայնից բազմութեան

մէջ է : Նախորդ Երեսփոխանական ժողովը օրինաւոր ատեան ունենալու համար 51 թիւը, իսկ ներկայ Երեսփոխանութիւնը ընտրելոց կէսէն միշտ մէկ աւելին որոշեց հիմն բռնել մեծագոյն մասի : այնպէս որ հետզհետէ քանի ընտրեալները շատնան նոյնքան բարձրանան մեծագոյն մասի թիւը : որով օր մը 140 թիւը երբ լրանայ, այն ատեն 71 թիւը մեծագոյն մաս կազմէ : Ասի Սահմանադրական սկզբան բնական ընթացքն է, որում կը հակառակի ներկայ առաջարկութիւնը :

Մեծ տարբերութիւն կայ Երեսփոխանաց անձամբ ներկայանալով ստորագրելու մեկնելուն և նամակը առնելով ստորագրելուն մէջ : Առաջին պարագային մէջ Երեսփոխանը իր կարծիքը յայտնած կը համարուի, իսկ երկրորդին մէջ այնպէս չէ : Միայն որոշեալ ժամուն ատեան բանալու պայմանը կ'ընդունիմ :

ԱՏԵՆԱԳՊԻՐ ԷՖ. — Փափազեան էֆէնտիի խօսքին մէջ պզտի սխալ մը կայ : Իրաւ է սր ձայնից բազմութեան մէջ կը կայանայ ժողովին ոյժը, բայց այդ պայմանը չէ թէ ատեան բանալու այլ որոշմանց համար միայն կը բընտուի : Երեսփոխաններէն անոնք, որ հրաւիրագիր ստացեր և չեն եկեր ժողովին, ըսել է ձայն չունին անոնք նոյն օրուան նիստին մէջ յուզեալ խնդրոց վրայ, մինչդեռ մենք որ եկեր եմք կարծիք և կամք յայտնելու. ուստի մեր մեծագոյն մասը պէտք է բնտուել այսինքն ձայնից բազմութիւնը և ոչ անձայնից : Մեր առաջարկութեան ոգին՝ ոչ թէ սոսկ մեծագոյն մաս բնտուել է այս կամ այն ինչ թուով, այլ աւելի խտտապահանջ ըլլալով՝ ժողովականաց սոխողութիւնը բնտուելէ, միայն սա տարբերութեամբ, որ ասոնց մէջէն անձայնները չպիտի դնենք ՚ի հայր նոյն և նման, որպէս քուէարկութեան մը մէջ ճերմակ թուղթերը չեն համրուիր և քուէից թիւը չեն կրնար աւելցնել՝ քանի հատ ալ ըլլան :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Օգտէն էֆէնտին կ'ըսէ թէ ըստ Սահմանադրութեան 71 թուով կը կազմուի մեծագոյն մասը, անշուշտ երեւութապէս 140 հոգի հաշուելով Երեսփոխանները, բայց ժողովը ճշդութեամբ որոշեց ընտրեալ Երեսփոխանաց մեծագոյն մասը բնտուել. անոնք որ հիմա այս նոր միջոցը կ'առաջարկեն, ըսել է ստորագրութիւնները երեսփոխան պիտի համարին առանց երբէք անձնական ներկայութիւն բնտուելու, և թերեւս օր մ'ալ անձերու տեղ

ստորագրութիւնները ժողով գումարեն : Սահմանադրութեան սկզբունք մ' ունինք մեզի ուղեցոյց, որ մեծագոյն մասի ներկայութիւն կը բնտուէ, ոչ որ կրնայ անկէ շեղիլ. շեղում մը՝ որ անվերջանալի զեղծումներու դուռ կը բանայ : Ժողովը օրինաւոր գումարումները դիւրացնելու համար միթէ միջոց կը պակսի. պէտք է պարտադանցները կարգի կանոնի բերուին և եթէ դարձեալ չյաջողի, դժուարութիւն չկայ կարժեմ անոնց տեղ նոր ընտրութիւն ընել տալու :

ՏՕՔ. ԻԻԹԻՃԵԱՆ ԷՖ. — Կը ցաւիմ որ պարագ ժամեր կ'անցունենք, թէ և բոլորովին ածողուտ չեն այս բանակցութիւնները խնդրին լուսաւորութեանը համար, բայց եթէ Երեսփոխան բառին նշանակութիւնը հասկնայինք, այս ժամանակի կորուստը չէինք ընէր : Ազգը բռնի չընտրէր իր երեսփոխանները, և ընտրուելէ ետքը՝ հրաժարողը ծանր տուրք կամ տուգանք տալու չի դատաւարտուիր : Ո՛վ որ պաշտօնը կը պահէ, պէտք է կատարէ զայն : պաշտօն մը՝ որ նիւթական այնքան մեծ զոհողութիւն մը չի պահանջեր. եթէ ոչ տարին տասն անգամ ժողովին ներկայ գտնուիլ : Ամէն կանոն իր բացառութիւնն ունի, կան պատճառներ որք բացակայութիւնը կարգարացնեն, ինչպէս հիւանդութիւնն և, և զոր կրնայ խմացնել բացակայ գտնուելու հարկադրեալ Երեսփոխանը, բայց կան շատեր՝ որ ստէպ բացակայ են և սակայն երբէք պատճառ մը չեն յայտնած, և իրաւունք կու տան մեզի կարծելու թէ ժողովրդեան ընտրութիւնը կ'անգոսնին. այն որ անկարող է, պէտք է հրաժարի. ահա այսքան պարզ է իւր ընելիքը, միթէ Ընդհ. ժողովը ամէն անգամ զանազան խնդիրներ լուծելու համար օրէնքնե՛ր պէտք է սահմանէ, մենք մեր օրէնքն սենինք և այս արտաքոյ կարգի պարագաներու համար օրէնք կամ պայման դնելու հարկ չկայ. ժողովին չեկողը, եթէ բանաւոր պատճառ մ'ունի, պէտք է զայն կանխաւ արդ առնէ նամակաւ. իսկ եթէ բոլորովին անկարող է, պաշտօնէ քաշուի : Ռուսինեան էֆէնտին կ'առաջարկէ որ հրաւիրագիր տանողը ստորագրութիւն առնու, բայց այս միջոցն ալ դործնական անհնարութիւններ ունի, կարելի է արդեօք որ երեսփոխանք տուներնին սպասեն հրաւիրագիր եկած ատեն ընդունելութեան գիր ստորագրելու համար, կամ ցրուիչը օրն ՚ի բուն սպասէ երեսփոխանին վերադարձին : Ես իբր բժիշկ չեմ կրնար տանս մէջ սպասել :

ԱՏԵՆԱԳՊԻՐ ԷՖ. — Ինչպէս որ հետագիր մը եկած ատեն, երբ անոր տէրը իր բնակարանը կամ գրասենեակը չգտնուի, ուրիշ մը՝ որ կայ ՚ի հարկէ հոն, սահմանափակ ստորագրութիւնը կու տայ, որ բաւական ապահովութիւն է թէ գիրը իր տունը հասած է, և իր ձեռքը պիտի անցնի անշուշտ մէկ պահէն, նոյնը կրնայ ըլլալ նաեւ այս պարագային մէջ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. Տօքթօր Իւթիւճեան էֆէնտի ցաւ կը յայտնէ Երեսփոխանական ժողովոյ ընդունայն ժամանակ սպառելուն համար, ես ալ կը ցաւիմ որ ինք այսպէս կը կարծէ : Երբէք ժողովը վիճարանութիւնը աւելորդ չի համարուիր, զի այս խնդիրը մեր ազգային բոլոր խնդրոց լուծման բանալին և իբր այն՝ ամենէն կարեւորն է : Ժողովին ներկայացեալ առաջարկութիւնը ո՛չ օրինաց կը հակառակի և ոչ նոր և օտարափ օրէնք մըն է, այլ պարզապէս ներքին կարգադրութիւն մը, մի միայն օրինաց տրամադրութիւնը գործադրելու համար մտածուած, հետեւողութեամբ այն սկզբան՝ որ երեսփոխանին՝ ատեանին բացուելու ժամը կը ծանուցանէ և խնդրոց կարգը կը հաղորդէ իբր հարկաւորութիւն մը : Այս կարգադրութիւնը իւր գործադրութեանը մէջ գուշակուած դժուարութիւններն ալ չունի, Երեսփոխանը ո՛վ և ըլլայ, ընդունելութեան գիրը պիտի ստորագրէ երբ հրաւիրագիրը իւր ձեռքը հասնի, ինք պարտաւոր չէ տանը մէջ կամ այլուր անոր սպասելու : Սակայն անոնք որ այս առաջարկութիւնը թերի կը նկատեն, կրնան իրենց մտածած միջոցը ցուցնել հերիք է որ անիկա օրինաց չհակառակի, իրաւունքը չվիրաւորէ, և փափազուած արգիւնքը յառաջ բերէ :

ՔՕԼՕԼԵԱՆ Ա. ԷՖ. Ներկայ երեսփոխանութեան նոր խնդիր մը երեւցաւ ատեան բանալու պայմանի խնդիրը, բայց այնքան հին է, որ նորութեան երեւոյթ մ'առած է այսօր : Ընդհ. ժողովը տասը տարիէ ՚ի վեր այս դժբաղդութեան դէմ կը մարտուի, ընդհանրապէս՝ տեսակ մը ստիպմամբ կամ թախանձանօք կարելի եղած է մեծագոյն մաս ձեռք բերել օրինաւոր նիստ կազմելու համար :

Եթէ յանցանք մը կայ այս պարագային մէջ, ո՛չ այնքան պարտադանց Երեսփոխանինն է այն, որքան ընտրողին, որ իւր քուէն հարեւանցի տուած է այնպիսի մէկու մը՝ որ իւր պարտուց ճանաչումը չունի : Այնպիսի երեսփոխաններ ունեցանք՝ որ տարիներով չեկան ժողովին, և

ժողովը չկրցաւ դարման մը գտնել ասոր՝ երկար ատեն այս խնդիրն յուզելէ կտրքը կարծեմ կրբեմն ըսուեցաւ թէ էրեք անգամ չեկող Երեսփոխանը հրաժարեալ համարուի, և արդեօք ժողովոյ եկողները պարտադանցներուն գերին են, ևս Ռուսինեան էֆէնտի առաջարկութեան համակարծիք եմ միայն թէ հարկ կը տեսնեմ որ բացակայ գտնուող երեսփոխաններուն համար այս տեսակ օրէնք մը սահմանուի:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Այս առաջարկութիւնը՝ որ օտար և դժար բան մը կարծուեցաւ, ըստ իս խիստ պարզ է, և եթէ ատեան բանալու համար առաջարկուած այս նոր կերպին մէջ տարբերութիւն մը կայ, արդիւնքին վրայ չէ, այլ Երեսփոխանին ստորագրութիւնը հոս կամ իր տանը մէջ առնելու վրայ է միայն: Երկու միջոց միանգամայն ի դժուար կրնայ գրուիլ որք զիրար կը շօշափեն և ցանկացեալ նպատակը կրնան յառաջ բերել: Առաջին՝ Սահմանել օրէնք մը, որով հրաժարեալ համարուի յաջորդաբար երեք նիստի բացակայ գտնուող Երեսփոխանը, երկրորդ՝ որոշել որ 71 ստորագրութիւն գտնուած ժամանակ ատեան բացուի, թող նամակատար պաշտօնեայն հոս, տունը, միողոցը, առնու ստորագրութիւնը, միեւնոյն բանն է, հերթ է որ օրինակ որ թիւը գոյանայ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ա. ԷՖ. — Կ'առաջարկուի 71 ստորագրութիւն գտնուած ատեն՝ ատեան բանալ և Երեսփոխանաց տուները ներկայութեան տունը մը զրկել ստորագրութիւն ժողովու համար: Իսկ բացակայութեան պարագային մէջ հետագրական նամակներու համար եղածին նման ստորագրել տալ տան մէջ գտնուողներէն մէկուն, որ ի հարկէ խոհադործ մը, տնտես մը և սպասաւոր մը կրնայ ըլլալ: Կիտէ՞ք ուր կը տանի զմեզ այս անհեթեթ ընթացքը, յանտեղութիւն, և կը ծառայէ միայն պարտազանցութիւնը քաջալերելու: Միթէ նախորդ Երեսփոխանութիւնը այսքան կատարած ունի՞ իւր պարտքը չեմ կարծեր, ժողովը տասը յաջորդական նիստի մէջ շարունակ մեծագոյն մաս ունեցաւ և միայն մէկ անգամ պատահած բացառութեան համար շուարած կ'ուզենք այնպիսի կանոններ գտնել, որք մշտնջենաւոր բացառութիւններով կտրէն պիտի պաշարեն մեզ: Գաւառներու մէջ մեծամեծ խտովութիւններ և յուզումներ յարուցանելու պատճառ պիտի ըլլանք: Միտքերնիդ բերէ՞ք, որ 1866ին մեծագոյն մասի

71 թիւը 51ի փոխուելուն համար, դաս մը մարդիկ պատրուակ մը գտան երթալու, և Սահմ. համեմատ չի վարուիլ ըսելով, Երեսփոխանութիւնը լուծելու: Արդ՝ ինչ վստահութիւն ունինք որ օրին մէկը խուսմը մ' ալ մեր մէջէն չըպիտի ելնէ, և անոնց պէս առիթ համարելով զայս Երեսփոխանութիւնը միեւնոյն վիճակին ենթարկէ: Կարելի՞ է միթէ որ այսպէս 30-40 ժողովակրտնով ատեան կազմուի, և Ազգը շիտ թուիլեան մէջ չանկանի: Կ'առաջարկեմ որ պարտազանց երեսփոխաններուն ազդարարութիւն ըլլայ, որ կամ ներկայ գտնուին և կամ հրաժարին:

Ըստ իս այս է խնդրոյն բնական լուծումը՝ որ օրէնք փոխելու հարկ չի թողուր մեզի: Հերթ չեզա՞ւ միթէ այս փոխութեանց երեսէն մինչեւ ցարդ մեր գլխուն եկած փորձանքը:

ՆՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Պիտի ջանամ համառօտիւ քանի մը տեսակ առարկութեանց միանգամայն պատասխանել: Նախ Օգոսէն էֆէնտին Քրիստոսաւոր էֆէնտիի դիտողութեանց ի պատասխան իմ խօսքիս ակնարկելով ըսաւ, թէ ատեան բանալու պայմանին վերաբերեալ առաջարկութիւնը նոր օրէնք մը չէ, այլ այս մասին ի դժուար դրուած հին զեղծում մը շնչելու պիտի ծառայէ միայն:

Ընդհակառակն ևս կը սնդեմ թէ սխալ կարծիք մըն է այս, և թէ նոր խնդիր մըն է սյգ առաջարկուելը որ կուգայ ժողովոյն օրինագրուելու: Երբ Ազգի մը Օրենսդիր ժողովը օրինագրքին մէկ յօդուածը կը փոխէ, ա՛լ հինը ոյժ չունի: Իրաւ է որ Սահմ. մէջ մեծագոյն մասին ներկայութիւնը պահանջուած է ատեան բանալու համար, ժողովը որոշած է ընտրեալ երեսփոխանաց մեծագոյն մասը ընտրել և կարծեմ թէ այս որոշումը Սահ. կը համաձայնի, կամ մանաւանդ անկէ ըզխեալ է: Ամէն երկրի մէջ օրինաց բուն ոգին և անոր խնաստը կը նայուի աւելի, քան բառական նշանակութիւնը, եթէ ոչ՝ զործադրութիւնն անհնար է: Եւ ստուգիւ երբ ժողովը 71 թիւը 51ի վերածեց, ինչ էր իր իրաւունքը, և ինչոյէս օրէնքը զայս ներկեց իրեն: Սահմանագրութեան 58րդ յօդուածը կրտէ թէ «Ընդհ. ժողովը նիստ չի կրնար ընել մինչեւ որ անգամոց մեծագոյն մասը չի գտնէ 71 հոգի ներկայ չըլլան»: Իսկ 82րդ յօդուածը կը տրամագրէ որ, երբ Պօլսի մէջ Երեսփոխանաց մեծագոյն մասը ընտրուած ըլլայ, ժողովը կրնայ գումարուիլ: Ա՛կրջի յօդ-

ուածը առաջնոյն միտքը կը բացատրէ, և զմեզ սակարակացութեան կը տանի, որ մինչեւ Պօլսի երեսփոխանաց մեծագոյն մաս չգտնուի, ատեան չի կրնար բացուիլ, ուրեմն 71 թիւը՝ որ 58րդ յօդուածին մէջ տրամագրուած է, մեծագոյն մասը հաշուելու եղանակը կը ցուցնէ, և տարակոյս չի թողուր, թէ մի և նոյն թիւը՝ անխտիր չի կրնար պահուիլ, երբ ժողովը՝ որ ամբողջ 140 երեսփոխաններէ կը բաղկանայ, կարող է գումարուիլ, 51 երեսփոխան այսինքն Պօլսոյ երեսփոխանաց մեծագոյն մասը ընտրուելուն պէս, զի այն ատեն մեծագոյն մասի խնդիրը օրինակորթութեան շաւղէն աւելի անդին կը տանի զմեզ, եթէ այս պարագայիս մէջ, 58րդ յօդուածին տրամագրութիւնը՝ 82րդ յօդուածին համաձայնեցնելով խնդիրը չլուծենք, 58րդ յօդուածին բառական նշանակութեամբ, 51 ընտրեալ երեսփոխանաց մէջ, 71 հոգի բնտուելու անտեղութեան մէջ պիտի գտնուինք. մինչեւ Սահմանագրութիւնը այս տեսակ պահանջում մը չունի և չի կրնար ունենալ: Ընդհ. ժողովը աւասիկ օրէնքն այսպէս մեկնեց և իրաւամբ, հետեւապէս որոշեց որ ընտրեալ երեսփոխանաց մեծագոյն մասը հինն բռնուի, և ատեանը անոր ներկայութեան բացուի:

Եթէ զործադրական դժուարութիւն մը ունի այս որոշումը, այն ատեն Ընդհ. ժողովը իբր օրէնսդիր մարմին մը՝ կրնայ կանոն մը գտնել, դժուարութիւնը լուծելու համար, իսկ ստորագրութիւն հաւաքելով ատեան բանալու համար եզած առաջարկութիւնը՝ ժողովոյ նիստերուն թերեւս հարուած մ'ըլլայ, և հարկ է մտածել որ եթէ ամէն երեսփոխան իւր տեղը ստորագրութիւն մը զրկէ, ո՞վ պիտի կազմէ ժողովը, ո՞վ վիճարանի, որոշէ և տնօրինէ ազգային գործերը:

Ես կ'ըսեմ թէ շատ արդարացի դիտողութիւններ ըրին առաջարկութեան ընդդիմախօսները. կատարեալ Սահմանագրութիւն մը ո՛չ մէկ ազգ մ'ունի, փորձառութիւնը միշտ թերութիւններ երեւան կը հանէ, և օրէնքը հետըզհետէ կատարելութիւն կը գտնէ, ըսել կ'ուզեմ կը պատասխանէ պիտոյից պահանջումներուն: Եթէ Սահմանագրութեան ոգին և սկզբունքը մինչեւ յաւարտ վերաքննութեան մեզի հինն բռնենք, կրնանք միշտ համաձայնիլ իրաց ելքը գտնելու: Արդ՝ այս սկզբունքով խնդրոյն լուծման համար երկու յօդուածի ծրագիր կը ներկայացնեմ, և կ'առաջարկեմ որ ժողովը ամէն

նկատումներ մէկ դի թողլով, ուշադրութեան առնու գայն:

Յօդ. Ա. Արոշեալ ժամուն ատեանը կը բացուի առանց նայելու ներկայ երեսփոխանաց թուոյն: Օրուան կարգի խնդրոց վրայ վիճարանութիւնը կ'սկսի, իսկ քուէի չի կրնար դրուիլ եթէ մեծագոյն մասը ներկայ չէ:

Յօդ. Բ. Այն խնդիրը՝ որ նախորդ նիստի մը մէջ վիճարանուած և մեծագոյն մաս չըլլալուն պատճառաւ որոշումը յաջորդ նիստին թողուած է, երբ հրաւիրագիրներուն մէջ նշանակուած է, նոյն նիստին ատեանը փակուելուն մէկ ժամ մնացած քուէի կը դրուի, և իւր վերջնական որոշումը կ'ընդունի ներկայ անգամոց մեծագոյն մասով, ո՛ր և ըլլայ այս անգամ ատոնց թիւը:

Փորձը կը հաստատէ իմ ըսածս, ժամը 6ին 40 երեսփոխան կար ներկայ, հիմայ 8 է՝ և անոնց թիւը 60ի հասած է: Եթէ ժողովը չ'ուզեր որ ատոնք ապագային համար օրէնքի կարգ մտնեն, կ'առաջարկեմ գոնէ առժամանակեայ կերպով գործադրելի ընել, մինչեւ որ վերաքննութիւնը աւարտի:

ՔԱՋԱՋԵԱՆ Յ. ԷՖ. — Ժողովը ինչպէս ասկէ ստաջ որոշած է 51 երեսփոխանաց ներկայութեան պէտք է ատեանը բացուի, մինչեւ որ վերաքննութիւնն աւարտի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Իբր գիւտանի անգամ, հարկ կը համարիմ զիտել տալ ժողովին, որ իւրապէս մեծ տարբերութիւն կայ, ատեան բանալուն և որոշումներ ընելուն մէջ: Այս տարբերութեան գիտակցութիւնը թերեւս խնդրոյն լուծման նպաստէ: Սակայն դեռ եւս 8 ատենաբանք կան խօսից կարգին մէջ, որք եթէ երկար խօսին, այսօր ժողովը չի կրնար ուրիշ խընդրոց անցնիլ, այս նկատմամբ ժողովին կամաց կը դիմեմ, զիտնալու համար թէ արդեօք կուզէ՞ ատեան բանալու խնդրոյն շարունակութիւնը յաջորդ նիստին թողլով ուրիշ խնդրոց անցնիլ:

Ժողովոյ մէջէն այս հարցման ի նպատակ ընդդէմ պատասխաններ խառն և անորոշակի կը լուին, հետեւապէս ատենապետ էֆէնտի խնդիրը քուէի կը դնէ, և ժողովը մեծագոյն մասամբ կ'որոշէ անընդմիջաբար շարունակել ատեան բանալու խնդիրը:

Այս պահուս ժողովը կ'ընդհատի և տասը վայրկեանի հանգստէ ետքը, ատեանը կը շարունակուի կրկին:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Մեծագոյն մասի խնդիրը՝ սահմանադրութեան մէկ մասնաւոր կամ աննշան կանոնը չէ՛ որ մեր ձեռքն ըլլայ փոփոխել զայն, առարկելով թէ՛ դործադրութիւնը դժուարութիւններ ունի: Եթէ արդի սահմանադրութիւնը որ մեր միակ օրէնքն է հիմայ, քանի որ դեռ վերջնական կերպով վերաբնութեան չէ՛, դործադրութիւն չգտաւ, պակասութիւնը ոչ այնքան իր մէջն է, որքան զայն դործադրելու պաշտօն ունեցողներուն վրայ. մեծագոյն մասի սկզբունքը՝ չի կրնար խնդրոյ տակ ընկնիլ, անի ո՛չ միայն դրամական այլ և բնական օրէնք մըն է, վասն զի բարեութեան մը կեանքն աւելին՝ մինչև որ իր հաւանութիւնը չտայ, բան մը չ'որոշուիր: Եւ ի՞նչ պէս կարելի է ատենան բանալու համար առանց մեծագոյն մասի ներկայութիւն բնաւոր ստորագրութիւններով գո՛չ ըլլալ, որ որոշուելիք խնդրոյն վրայ կամք չի յայտներ, որ ձայն մը չէ՛ և չի կրնար հաղորդակցիլ խօսողներու դադարաւորաց հետ. մէկ քանի երեսփոխանաց բացակայութեան հետեւութիւնները դարմանելու համար, հարկ չէ այս տեսակ ծայրայեղ զեղծումներու յարկ: Չայս վիճակը բանալու ամենէն լաւագոյն միջոցն է ըստ իս. Քօլորեան էֆէնտիի դիտողութեանց վերջինը, այն է կանոն մը սահմանել բացակայ գտնուող երեսփոխանաց դէմ, որք չկրնան իրենց պարտադանցութեամբը ժողովին դործունեայ եռանդը անգամարածել:

ՏՕՔ. ԻԻԹԻԻՃԵԱՆ ԷՖ. — Նախ՝ սրայմանաւ երեսփոխանութիւն չեմ ընդունիր, երկրորդ՝ կ'ուզեմ որ պարտազանց երեսփոխանաց անուաններն իրենց ընտրողաց ծանուցութիւն և հաշմանին, ինչպէս Քօլորեան էֆէնտին ըստ:

ՈՍԿԱՆ Յ. ԷՖ. — Կը յիշեցնեմ որ երկրորդ նիստին մէջ դործելու դիւրութեան համար առաջարկեցի որ ժողովը «բլան» մը ունենայ, բայց առաջարկութիւնս չընդունուեցաւ. հիմա կրկին զնոյն կ'առաջարկեմ: Իսկ ատենան բանալու խնդրոյն դալով՝ որպէս զի վէճերը չերկարին, ըստ իս պէտք է զայն Սահմանադրութեան վերաբնութեան ժամանակ յուզել իւր բոլոր մասունքներովը, հետեւապէս ժողովը մեծագոյն մասի համար ընդունած ներկայութեան արդի թիւը բաւական համարելու է առ այժմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մեծագոյն մասի առաջարկութիւնները հոն կը յանդին, թէ ըստ որում կարեւորութիւն ունին լուծուելու խըն-

դիրները, մէկ քանի պակաս երեսփոխանաց չապաստելով ատենան բացուի: Բայց միայն վիճարանութիւն ըլլայ խնդրոց վրայ և մեծագոյն մասի ներկայութեան արուի որոշումը:

ՈՍԿԱՆ Յ. ԷՖ. — Սկզբնական խնդիրը հոս է, թէ երեսփոխանաց ներկայութիւնը անձնական պէտք է ըլլայ թէ՛ դրամոր: Եւ այսպիսի խնդիր մը յարուցանել անկարելի է, մինչև որ Սահմանադրութիւնը չվերաբնութի:

ՄԱԶԻՆՍԵԱՆ Յ. ԷՖ. — Այս յուզում խնդիրը նոր չէ, արդէն ընդհ. ժողովոյ երկրորդ նիստին մէջ վիճարանութեան նիւթ եղաւ, և այն ատեն կարծիք յայտնեցի որ օրէնքը անվթար պահուի, այսինքն մինչև 71 երեսփոխան ներկայ չգտնուի՝ չկրնայ ատենան բացուիլ:

Լսելի չեղաւ ձայնս, և 70 ժողովականներէն 48 հոգի 2 քուէի դէմ քուէ սուրին, որ ընտրելու երեսփոխանաց մեծագոյն մասը իւր օրինաւոր թիւ համարուի, և անոնց ներկայութիւնը բաւական ըլլայ դործելու համար: Այն ատեն գուշակեցի թէ այս որոշումէն՝ որ օրինաց պահանջած մեծագոյն մասի թիւը կը ջնջէր, ի՞նչ անտեղութիւններ պիտի ծնին, գուշակեցի թէ օր մ'ալ զայն փոխելու պիտի հարկադրուինք, քանի որ ապահովութիւն չկար, թէ այս եզանակաւ կարելի պիտի ըլլայ մեծագոյն մաս ունենալ:

Այս մատճումներով առաջարկեցի որ Սահմ. ՅՁրդ. յօդուածը վերաբնութի: Այսօր ալ մի և նոյնը կրնայ ըլլալ. բայց եթէ դարձեալ ժողովը զայն անպատեհ տեսնէ, կը մնայ ուրիշ միջոց մը, այն է ատենական կանոն մը սահմանել զոր Երեսփոխան էֆէնտին երկու յօդուածով կը ներկայացնէ, որու ամէն երեսփոխան կը համակերպի, և որով վաւերական կ'ըլլան ժողովոյ որոշումները:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Մենք ուզեցինք խնդիրը լուծել իւր աղբիւրին դիմելով: Ժողովը առաջուց ի վեր ստորագրութեանց թուոյն մէջ բնութեան է միշտ մեծագոյն մասը, և չէ թէ անձերու ներկայութեան մէջ: Այս տասնամեայ սովորութեան հետեւելով, ստորագրութեանց դիւրութեան համար միջոց մ'առաջարկեցինք, և յարեցինք որ ատենան բանալու համար 71 երեսփոխանաց ստորագրութիւնը պէտք է բընտրուի, բայց չսինք երբէք, որ 71 խոհադործի ստորագրութիւն ժողովին դայ, ինչպէս ըսող եղաւ, այս երկուքը այնքան հեռի են իրարմէ որքան երկինքն ու երկիր:

Այս տեսակ մեկնութիւններով խնդիրը չե-

ղեցաւ իր բնական ուղղութենէն և խել մը առաւելութիւններ երեսան երես, որ խնդրոյն անհաղորդ էին: Պահանջել որ անստորագրութիւնները ժողովարանին մէջ գրուին, մեծ արդեւք մըն է օրինաց տրամադրած 71 թիւը ունենալու համար, սակայն երբ տեղական խնդիրը մէկ կողմ դրուի, դիւրին է մեծագոյն մաս գտնել: Երեսփոխանաց ստորագրութիւնները հոս առնուել է կամ այլ ուր, չգիտեմ թէ ի՞նչ տարբերութիւն ունի և ի՞նչ ազդեցութիւն կը գործէ արդիւնքին վրայ, միթէ պայմանադիր մը իր ոյժը գրուած տեղէն կառնու թէ՛ ստորագրութեանէն, որ այսքան տեղին կը յարին և չեն յիշեր, որ ժողովը ստորագրութեանց կը յենու ատենան բանալու համար: Չարմանալի է նաեւ որ 10 տարիէ ի վեր ո՛չ ներկայութեամբ, այլ ստորագրութեամբ գո՛չ եղող երեսփոխանութիւնը, նոր ի նորոյ կարթննայ, այս երկուքին մէջ տարբերութիւններ կը գտնէ, և իր բունած ընթացքը կը քննադատէ, երբ անոր վրայ կ'ընկնելով դիւրին միջոց ցուցինք ստորագրութեանց դիւրութեան համար: Ինչ և է, այս դիտողութիւնները, թէ և նոր՝ բայց օրինաւոր կը թուին, ուստի զայս ամէնը մէկ կողմ թողով՝ կ'առաջարկեմ որ երբեք նիստի յաջորդարար ներկայ չգտնուող երեսփոխանը, հրաժարեալ համարուի, և անոր տեղ նոր ընտրութիւն ըլլայ: Այս անօրէնութեամբ ստորագրութիւն, ներկայութիւն՝ կապահովուի և ժողովին արժանապատուութիւնը անվթար կը մնայ: Եթէ ամէն բանէ առաջ չլիք փութեամբ ապահովել ժողովին նիստերու շարունակութիւնը, և միշտ այլ ընդ այլոյ խնդիրներ յարուցանենք, ճիշդ այն վիճակին պիտի հասնինք՝ ուր Պատրիարք մը գտնուելուն համար աթոռէն վար առինք, ուր մեր նախորդները տեսնելով բաւարակեցինք, նման այն մարդուն որ մարդ կ'սպաննէ արդարութեան պարտք մը կատարելի ըսելով, և երբ իրմէ զատ ուրիշ մ'ալ սպանութիւն մ'ընէ, եղեռնագործ մըն է այն կ'աղաղակէ, ինչո՞ւ, վասն զի ինք չէ ոճիրին հեղինակը:

Իմ վերջին առաջարկութիւնս կրնայ ամէն հակադէմ կարծիքները վերջացնել, և Սահմանադրութեան վերաբնութեան յարակից խընդիր մը չէ, որու դէմ առարկեցին թէ ատենաց Բ. դիւան վաւերացման չէ կարելի ի դործ դնել: Կը խնդրեմ դիւանէն որ զայն իմ յատուկ բաւարակութիւն քուէի դնէ:

ՔՕԼՕԼԵԱՆ ԷՖ. Երբ Ռուսիան էֆէնտիի առաջարկութեան համակարծիք երեւցայ, իբր ճանարտութիւն ընդունած էի, որ յուշում խընդիրը կորուկ տնօրէնութեան մը պէտք ունէր, իր կարեւորութեանը համեմատ:

Գտնուեցան անանկ երեսփոխաններ, որ մէկ տեղամ մ'ալ ժողովին չեկան, յանցանքը ոչ այնքան պարտազանց երեսփոխաններուն է ըստ իս, որքան ընտրողաց՝ որք չեն ձանձր թէ՛ ո՛վ է իրենց ազգային ժողովին զրկած մարդը:

Ռուսիան էֆէնտիի խօսքին յարեցի, թէ որքան ներկայ երեսփոխան գտնուի, ատենանը բացուի, բայց չեկողը հրաժարեալ համարուի, և իր թաղը բացարձակօրէն նոր ընտրութեան հրաւիրուի, այս որոշումը թերեւս խիժան մ'ըլլայ չեկող երեսփոխանը իր բարոյական պարտաւորութիւնը կատարել դրդելու:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Կ'ուզեմ Քօլորեան էֆէնտիի մէկ խօսքին պատասխան տալ, որով ընտրողներու վերագրեց բացակայ երեսփոխանաց պակասութիւնը: Կը նկատեմ որ մարդ կը բնտուենք անոր վրայ յանցանք բեռնաւորելու համար: Եթէ հարկ է յանցանաց հեղինակը բնտուել, թող Երեսփոխանական ժողովը իւր վրայ ստնու զայդ յանցանքը, ժողովուրդը շատ լաւ ընտրեր է իւր երեսփոխանը, և գտնուածն ալ այն է: Հագար անդամ ալ փոխել տաս զանի, պիտի տեսնես որ մէկ անգամ ժողովոյ ներկայ պիտի գտնուի և երբեք անգամ չպիտի դայ, քանի երեսփոխան հրաժարեցան, լսեցի որ կ'ըսէին թէ՛ վիճարանութեան զատ դործ չի տեսնուիր որ ուրախ սրտիւ շարունակենք մեր պաշտօնը: Ճանարիտ է որ դործը մարդուն սրտին բերկրանք կազդէ, ո՛վ է այն մարդ՝ որ իւր խանութը երթայ, և յաջողութիւն ու շահ չգտնելով շարունակէ իւր երթելակը: Ընդհ. ժողովը վիճարանութեանց մէջ սահման չի բնաւեր և խնդրոյն ուղոյն չի նայիր:

Կրբ ժամը Յին ատենան կը բացուի, վիճարանութիւնը կ'սկսի և խնդիրը այն ինչ որոշման վիճակին հասած, ահա ուրիշներ կու գան, կը նորոգեն վիճարանութիւնը, ո՛վ որ խօսիլ գիտէ, անոր ժամերը թեթեւօրէն կը սահին, իսկ չգիտացողին համար ահագին են անոնք, ի՞նչ են այս ճգնիմ մեկնութիւնները և խժքժանքը: Ի՞նչ արդիւնք ունի այս ծայրայեղութիւնը: Ճանարիտս ըսեմ երբ այս սպարդիւն վիճարանութիւնն ընդ երկար տեւէ, իբր սպանալիք

մի՛ ըմբռնէք խօսքս : պիտի անբաստանեմ ըզ-
ձեզ ժողովուրդի սուած թէ՛ գործ չէք տեսներ :
և կ'ուզէք սափորը պատրիարքի գլխին վրայ
կտորել : Արշութիւնը իր համարատուութեան
ատեն երկու հազարի մօտ տնօրինուած խնդիր
պիտի ներկայացնէ Ձեզի : բայց դուք որ ան-
գործ ու ապարդիւն անցուցեր էք Ձեր ժա-
մանակը ինչպէս պիտի համար առնուք անկէ . և
դո՛ւք ինչպէս համար պիտի տաք ժողովուրդին :

Արդ՝ բուն խնդրոյն դառնալով կառավար-
կեան որ որոշեալ ժամուն ատենան բացուի խնդ-
րոց փնտրանութիւնը սկսի : և որոշումը մեծա-
գոյն մասի ներկայութեան վերապահուի :

Կ'առաջարկեմ քուէի դրուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կեցցէ Արքայան Նա-
նազահը , որ ստուգիւ շատ աղէկ նկարագրեց
մեր ներքին կացութիւնը : կառավարկեմ որ իւր
առաջարկութիւնը քուէի դրուի :

ՓԱՓԱՉԵԱՆ Ս. ԷՖ. — Քուէի դրէ՛ք :

ՔՕԼՕԼԵԱՆ Ա. ԷՖ. — Խօսք կ'ուզեմ Արքա-
զան Նախագահին մէկ սխալ կէտը ուղղելու
համար :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. Ամիսիկներ Նախագահ Արք-
ազանի առաջարկութիւնը :

Կ'առաջարկէ որ սահմանեալ ժամուն ատ-
եան բացուի անվրէպ , երեսօխտանաց թիւը
ո՛րքան և ըլլայ , բայց ժողովը չկրնայ որոշում
ընել մինչեւ որ մեծագոյն մաս չգոյանայ :

Ընտրեալ երեսօխտանաց թուոյն վրայ կը
քննուի մեծագոյն մասը , այսինքն անոնց կէտէն
մէկ աւելի :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱՉԱՆ. — Այո՛ , ճիշդ է ,
այդ մտք է առաջարկութիւնս :

ԳԱՐԱԿԷՕՋԵԱՆ Կ. ԷՖ. — Նախագահ Արք-
ազանի առաջարկութիւնը խիստ գործնական
և ժողովոյ նպատակը կը տեսնեմ քուէի դրուի :

Յարմար կը դատիմ միայն յարել որ առանց
հիւանդութեան և ճանապարհորդութեան պատ-
ճառի երեք յաջորդական նիստի ներկայ չգրտ-
նուող երեսօխտանը հրաժարեալ համարուի :
Առաջին առաջարկութիւնը՝ ատենին բացումը
կը դիւրացընէ , եսկ երկրորդը՝ զոր առաջ-
նոյն լծորդեցի , այն նպատակն ունի , որ
չըլլայ թէ՛ ժողով : ժողով մեծագոյն մաս չու-
նենալու դժբաղդութեամբ որոշումներն եր-
կարաձգին :

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Արքայանի առա-
ջարկութիւնը Գարակէօզեան էֆէնտին հաս-
տատեալով իր կողմէն ալ ուրիշ մը յարեց , բայց

կարծեմ թէ երկուքը իրարու հետ լծորդուած
չեն կրկար քալել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. Գարակէօզեան էֆէնտին
Նախագահ Արքայանի առաջարկութեանը կը
յարէ , ուրիշներուն կողմանէ կանխաւ փոքր
ինչ տարբերութեամբ եղած առաջարկութիւն
մը :

Շատ մը ձայներ խնդրոյն քուէի դրուիւ
կը պահանջեն :

ԳԱՐԱԿԷՕՋԵԱՆ Կ. ԷՖ. — Պէտք է երկու
առաջարկութիւններն անբաժան սեպուին :

ԻՓԷՔՃԵԱՆ Հ. ԷՖ. — Կը յաւելում որ
հետզհետէ հրաժարելոց թիւը զեղջուի ընտրե-
լոց թիւէն , և նոյն համեմատութեամբ մեծա-
գոյն մաս բնտուի :

ԻԿԻՏՊԱՇԵԱՆ Ա. ԷՖ. — Քուէի դրէ՛ք Նա-
խագահ Արքայանի առաջարկութիւնը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թէ և Նախագահ Արք-
ազանի առաջարկութիւնը՝ որոշումները մեծա-
գոյն մասի ներկայութեան վերապահելու մա-
սին իմ առաջարկութեանս դէմ է , բայց կրնամ
ընդունիլ զայն այն պայմանաւ , որ եթէ երկ-
րորդ նիստին ալ դարձեալ մեծագոյն մաս չը-
գոյանայ , ա՛յլ նոյն օրը դոնէ խնդիրն որոշուի
ո՛ր և ըլլայ ներկայից թիւը :

Քանի մը ձայներ կը բարձրանան այս պայ-
մանին դէմ :

ԻԿԻՏՊԱՇԵԱՆ Ա. ԷՖ. — Քուէի դրէ՛ք :

ՔՕԼՕԼԵԱՆ Ա. ԷՖ. — Նախագահ Արքա-
զանը ինձ ակնարկելով ըսաւ թէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Ընդ միջևով) , Խնդրէ՛ն
կը շեղիք , հետեւապէս խօսք չունիք :

ՔՕԼՕԼԵԱՆ ԷՖ. — Կը բողբոքեմ այդ բռնա-
բարութեան դէմ , խօսքիս դէմ պատասխան
տրուեցաւ , պիտի խօսիմ :

ԻՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. Դիւանի թոյլ վար-
մունքին դէմ կը բողբոքեմ , որ այս օտար խօս-
քերուն տեղի կու տայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քուէարկութեանէն ա-
ռաջ պարտ կը համարիմ դիտել տալու , թէ ու
բողբոք մ' ընելու համար մեծագոյն մասի սպա-
սելը՝ մի և նոյն անտեղութիւնն է , որ մեզ կը
չարչարէ ատենան բանալու համար . և հոս ան-
տեղութիւնը աւելի այսպսեպի է , որ օրէնքի կեք-
պարան առած թոյլտուութիւն կու տայ խիստ
փոքրիկ մասի մը՝ իր հաճոյից խաղալիկ ընելի :

դիւժնագոյն մասը : կամ բնաւ չներկայանալով
որոշման օրը , կամ ճիշդ որոշման պահուն ձգել
երթալով : Եթէ նոյն պահուն ստորագրութիւն-
ները պիտի համրես , մեր առաջարկութեան և-
կամ կ'ըլլայ . եթէ անձինքը համրես , խոյս
կու տան ներկայութենէ և իրաւամբ , զի ո՛վ
կուզէ չարդիւրէ՛ երբ կրնայ խնդրի մը որոշումը
իր ներքին համոզմանը դէմ , այսինքն երբ հա-
մուղեալ է թէ իր կարծիքն է ճշմարիտն ու օգ-
տակարը : Այսպէս արատաւոր է այդ առա-
ջարկեալ օրէնքը , զորոյ տխուր արդիւնքը պիտի
տեսնէք կիսարութեան մէջ օր մը , և սրբազ-
րելու պիտի ելնէք . ցաւ է ինձ որ այսօրուրնէ
չէք ուզեր ընել այդ սրբազրութիւնը :

Քուէ կը պօսան ամէն կողմէ :

Ատենապետ էֆէնտին Նախագահ Արքայանի
կրկնած առաջարկութիւնը իր բացատրութեան
ձեւով քուէի կը դնէ , և ժողովը ընդհանուր
հաւանութեամբ կրտոյէ զայն . այսինքն՝ որոշ-
եալ ժամուն ատենան բանալ առանց մեծագոյն
մասի սպասելու , բայց որոշման մը համար մե-
ծագոյն մասի սպասել : Յետոյ կը տրամադրուի
բացակայ գտնուող երեսօխտանաց նկատմամբ
եղած առաջարկութիւնը քուէի դնելու , բայց
ժողովականներէն ոմանք խօսք կ'ուզեն նոյն
խնդրոյն վրայ դիտողութիւն ընելու :

ՓԱՓԱՉԵԱՆ Ս. ԷՖ. — Խնդրոց կարգէն
գուրս գտնուած առաջարկութիւն մը , այս օր
չտապաւ չի կրնար քուէի դրուիլ , յաջորդ նիս-
տին պէտք է մնայ , որ խնդրոց կարգն անցնի ,
և այս մասին խօսք ունեցող երեսօխտանները՝
որք թերեւս բացակայ են այս օր , կ'արենան
իրենց դիտողութիւնները յառաջ բերել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այդ առաջարկութիւնը
կարծուածին պէս օտարուսի չէ , այլ յարակից՝
ատենան բանալու պայմանի խնդրոյն :

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ ԷՖ. — Խօճասարեան և Գա-
րակէօզեան էֆէնտինները համամիտ կ'առաջար-
կեն որ շարունակ երեք նիստ բացակայ գտնուող
երեսօխտանները հրաժարեալ համարուին . այս
կէտը Սահմանադրութեան կը վերաբերի և չի
կրնար տեսնական կանոնաց մէջ մտնել ուստի
պէտք է որ ժողովը զայն վերաքննութեան ժա-
մանակ յուզէ և Սահմանադրութեան մէջ իր
կանոն անցընէ :

ՂԱԶԵՐԱՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կը կրկնեմ որ
այժմէն քուէի դրուի , ու հիւանդութեան և

ճամբորդութեան պատճառները միայն իրր բա-
նաւոր նկատուին :

ԳԱՐԱԿԷՕՋԵԱՆ Կ. ԷՖ. — Նմանապէս :

ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ Յ. ԷՖ. — Կ'առաջարկեմ
որ ժողովական մը երեք նիստի ներկայ չգրտ-
նուելէ ետքը , աղարար նամակ ընդունի , և եթէ
չորրորդին դարձեալ չգայ կամ չպատասխանէ ,
այն ատեն հրաժարեալ համարուի :

ՄԵՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Թէ և ժողովոյս
մասնակի վերանորոգումէն ՚ի վեր , անցեալ շաբ-
թու առաջին անգամ պատահեցաւ մեծագոյն
մաս չգոյանալ սակայն տարաբարութիւնը ախոր
եղաւ ներկայ երեսօխտանաց վրայ , և իրաւամբ
զի եկած էին անոնք Ազգային ստիպող խնդիր-
ները լուծելու , ինչպէս երեսօխտանի պարտա-
ւորութիւնը կը հրամայէր իրենց , արդեւք մը
տեսան իրենց առջև , արդեւք մը՝ որ ներքին
էր , որ մասնաւորներու կողմէ կու գար , բայց
բոլոր ժողովը կարգելու իւր պարտը կատա-
րելէ՝ և այսպէս մասնաւորաց պարտազանցու-
թիւնը ո՛չ միայն Ազգը՝ այլ և ժողովը կը տու-
ժէր Ազգին առջև : Հետեւապէս ժողովն իւր
այսօրուան նիստը ատենան բանալու պայմանի
խնդրոյն նուիրեց , և կրցաւ իւր նպատակին
համաձայն որոշում մը ընել . բայց այս հերիք
չէր , հարկ էր նաեւ մեծագոյն մաս գտնելն
ապահովել , որ ժողովոյ նիստերը միայն բանա-
խօսութեանց չձառայէին , և խնդիրները որո-
շելն ալ կարելի ըլլար : Այս էր կարծեմ Գարա-
կէօզեան էֆէնտինի բացակայ երեսօխտանաց
մասին ըրած դիտողութեան խմատը , և ա՛յս
խնդրոյն յարակից այս կէտն է որ մտքերը կը
յուզէ , և անոր լուծումը բնտուել կու տայ :
Ձեմ տեսներ երեսօխտան մը , որ այս գաղա-
փարով համակուած չըլլայ , բայց սա բացառու-
թեամբ որ , ոմանք կը վարանին թէ ընդհ. ժո-
ղովը առաջարկուած միջոցն ՚ի գործ դնելու
ձեռնհասութիւնը կրնայ ունենալ : Անտեղի չէ
իրենց վարանումը , բայց իրր գործնական մի-
ջոց առաջարկուածն է լուսագոյնը , զոր և ներ-
կայ պարագայից առջև կարեւոր կը համարին
Միայն արժան է զանազանել թէ՛ երեք անգամ
չարունակ բացակայ գտնուող երեսօխտանին
գիւանն այլ եւս հրաւեր չը պիտի կարգայ , թէ
ժողովոյն պիտի ծանուցանէ այս կարգի երես-
օխտանաց անունները , և ժողովը անոնց հրա-
ժարականը վճռէ :

ՔՕԼՕԼԵԱՆ Ա. ԷՖ. — Ներկայութեան տեւո-
րին մէջ բացակայ երեսօխտանին ստորագրու-

Թեան պակասութիւնը այդ վճիռը կարծակէ ի-
րեն դէմ. դիւանը կը քննէ, և երբ կը տեսնէ
որ երեք անգամ բացակայ գտնուած է, կը
սրբէ անունը երեսօխոխանաց ցանկին մէջէն, և
ժողովին գալու չի հրաւիրեր զայն:

ՄԷՐԵԼՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Այդ միջոցը
խնդրոյն ծանրութեան առջեւ անպատեհութեան
ենթակայ կը գտնեմ. ուստի կ'առաջարկեմ որ
այս պարագային մէջ դիւանը ինքնին չգործէ,
այլ ամէն անգամ երբ հարկը պատահի, առանց
հիւանդութեան կամ ճամբորդութեան պատ-
ճառի երեք նիստերու անընդմէջ բացակայ գըտ-
նուող երեսօխոխանաց ցուցակը ընդհ. ժողովոյ
ներկայացնէ, որպէս զի ժողովը վերջին անգամ
մ' ալ նկատողութեան առնու բացակայութեան
հանգամանքները և ապա հրաժարեալ հրատա-
րակէ զանոնք:

Ժողովականք այս ու այն կողմէն ճայն բարձ-
րացնելով ստիպմամբ կը խնդրեն որ քուէի


դրուի, չորս անձինք միայն ոտքի կ'եննեն և հա-
կառակ կամ կը յայնեն: Ատենապետ էֆէնտի
ուր ուրեմն խնդիրը քուէի կը դնէ, և ժողովը
Վ. քուէի դէմ մեծագոյն մասամբ կորոշէ, որ ա-
ռանց հիւանդութեան կամ ճամբորդութեան
պատճառի, երեք նիստերու շարունակ բացակայ
գտնուող երեսօխոխաններուն ցուցակը դիւանը
ժողովոյ ներկայացնէ, և ժողովը զանոնք հրա-
ժարեալ հրատարակէ:



ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Կ'առաջարկեմ որ
երկրորդ բացակայութեան ցանկը հաղորդուի
ինձի դիւանին կողմէն, որպէս զի առանձին նա-
մակով կարենամ ես ալ իմ կողմէս յորդոր կար-
գալ բացակայից:

Որոշուեցաւ տասներէինգ որ ետքը ժողով
գումարել, և ատենը վերցաւ ժամ 10 1/2 ին:

ՓՈՒՍՏԵՆԱՊԵՏ
Ս. ԱՂԱԲԷԿԵԱՆ

ԱՏԵՆԱԴՊԻՐ
ՌՈՒՍԻՆԵԱՆ





ԳԻՆ 2 ԴՏԾ

ՍԵՓՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԴԱՅԻՆ ՍՆՏՈՒԿԻՆ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի ի Ղալաթիա, և կը
դտնուի ամէն գրավաճառաց քով և Եկեղեցեաց բանկալները: